



ՇԱԲԱԹ ԱՐԵՐԹ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Բ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՄԱՍԿԻՆԻՆ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրութեանը դրկելու է առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Սասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ
Ազգային Տեսութիւն. Միացեալ Ընկերութիւնը Հայոց:
Հրատարակող. Չինական. (Յ. Թ. ԳԱՅԱՆԱՆ),
Գաւառի Հայ դատաստան վիճակն. (Մ. Զ.)
Գաղարուսն ժամանակի. (Պարսիկ մէջ). (Թարգմ. Օր. Ն. Է.)
Կրթական Տեղան. (ԱՇՈՏ).
Վեպ. Հայաստանի բարքեր. Սեպակ և Սոսուն, Բընութեան սոխակներ. (Ղ. Պ. ՆԱՋԱՊԵՏՅԱՆ).
Պարզած Շարժական Լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային:

ՊՈՍՏԱՆԴՆՈՒՊՈՂԻՍ, ՈՒՐԲԱԹ 18 ԴԵԿՏԵՄԲ.

ԱՉԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ

Եթէ բաւական ժամանակէ ի վեր չեմք չենք ունեցած խօսելու Հայոց Միացեալ Ընկերութեանց վրայ, պատճառն այն է որ Ընկերութիւնը, կառուաւոր մեքենայի մը պէս լարուած, չարունակէ իւր գործունէութիւնը թակահաս ասպարիզին մէջ, եւ առանց պարտաւոր լինելու, միշտ իւր բարեկարգ արդուութիւնը կը տարածէ այն ժողովրդին ուր պէտք է կուսիլ ընդդէմ գրեթէ անտեսութեան: Ընկերութիւնն այսօր առաւել մէջ կը պահէ, թէ իւր պարտաւոր եւ թէ իւր պաշտպանութեանը, 39 գաղտնիք արական եւ իրական, եւ երկուսն աշակերտաց թիւն 2,489. պաշտօնէից թիւն է 136: Միացեալ Ընկերութիւնն այսու կառուար զարկ մը կուտայ կրթական շարժման որ իւր ծագումն առած է Մեր ժողովրդական ինքնակալին երկրաչէն ժողովրդական օրով: Նախնական

կրթութեամբ մը կը ջանայ պարկեշտ եւ բանխմաց քաղաքացիներ պատրաստել որք կարենան լիովին ըմբռնել թէ ինչ են իրենց պարտականութիւններն հանդէպ երկրին եւ կարենան լաւագոյնս կատարել զայն: Պետութիւնը, մանաւանդ կեդրոնէն հեռու գաւառաց մէջ, պէտք ունի այնպիսի պաշտօնէից որք բաւական կրթութիւն մը ստացած ըլլան, եւ իրազեկ լինելով տեղային հանգամանաց, կարենան այս կերպիւ օգտակար ծառայութիւններ մատուցանել Պետութեան: Միացեալ Ընկերութիւնը մասամբ կը լեցնէ այդ պէտքն, եւ իւր ուսումնաւարտներէ շատեր կը կոչուին պետական ծառայութեանց: Վստահ ենք թէ Միացեալ Ընկերութեանց կրթական գործունէութեան այս պարագային վրէպած չէ կայս. կառավարութեան ուղղութեան: Ուստի մեծ կ'ըլլայ մեր զարմանքն երբ մերթ կ'իմանանք թէ զրպարտութիւններ կը լինին Ընկերութեան վրայ եւ դիտմամբ կը խեղաթիւրուին նորա գործառնութիւնը յաջրս կայս. կառավարութեան: Տարակոյս չ'ունինք թէ կայս. կառավարութիւնն, ոյր արդարասիրութիւնն եւ օրինաւորութիւնը վեր են ամեն գովեստէ, այսպիսի պարագայից մէջ եւս ցոյց կուտայ թէ դիտէ ինչ արժէք տալ անարգ զրպարտութեանց: Միացեալ Ընկերութիւնը երբէք զազոնի գործ մը չ'են ունեցած. իրենց գործառնութիւնը արեգական լուսոյն պէս ակնյանդիման են: Վարժարանները միշտ բաց են կառավարական ամեն այցելութեանց առջեւ, եւ անդ գործածող դասագիրք ամենքն ալ վաւերացուած են տղազրական տեսչութեան: Բաց անտի, ընկերութիւնը վարով պատուարժան անձինք ալ իրենց տիրասէր զգացմանց հաւաստին տուած են միշտ: Միացեալ Ընկերութիւնը չ'է կրթական ընկերութիւն մ'է եւ իւր նպատակն է նախնական պարզ կրթութիւն մը ծաւալել գաւառաց մէջ, իւր նպատակ Բաբելոն հաշտ եւ համաձայն է Տէրութեան շահուց, մանաւանդ հիմակ որ, Վեհ. Սուլթանին լուսամտի եւ կրթասէր տիրապետութեան շնորհիւ, կրթական շարժումն հետդէտէ կը ծաւալի եւ կ'ընդհանրանայ թուրքիոյ ամեն ժողովրդաց մէջ: Եզրակացնելով, յարատեւութիւն

եւ յաջողութիւն կը մաղթենք Հայոց Միացեալ Ընկերութեանց իրենց այս երկրաչէն գործին մէջ: Ընկերութիւնն արդիւնաւորապէս կը գործածէ իրեն յանձնուած լուսայն. մեր ամենուս պարտքն է ուրեմն օգնել Ընկերութեան եւ մեր աջակցութիւնը չը զլանալ նմա, որպէս զի կարենայ շարունակել իւր բարերար գործը:

ՀՐԱԺԵՇՏ ՄԻՐԱՅԻՆ (ԶԻՆԱԿԱՆ)

- Նէ կ'ըսէ. « Լըսե՞ս ձայնը արագաղին » .
Նա կ'ըսէ. « Բայց դեռ աստեղը կ'գանգապին » .
- Նէ կ'ըսէ. « Տե՛ս արշալոյսն ի ծիրանի » .
Նա կ'ըսէ. « Ո՛չ, ո՛չ, լո՛յս իմ, լո՛յս գեղանի » .
- Նէ կ'ըսէ. « Շիտակն ըսէ իմ սրբտակիր, Ծայրէ ի ծայր երկին ողջոյն չըսպիտակիր » .
- Նա կ'ըսէ. « Աստղն աւասիկ Առաւօտի Անդր ի սահման հորիզոնին փութայ մօտի » .
- Նէ կ'ըսէ. « Սէր իմ անուշ, սէր աննրման, Վերջին համբոյր . . . ժամ է ուրեմն արգբաժանման » .
- Յրնա՛ւ սէ՛ր իմ, խոնդիրք մ'ունիմ սակայն յետին,
— Լա՛ւ հարուածով մ'արագաղը փռէ գետին » .
- Զի է՛ն առջ շարաճրնին պատճառ տուաւ Մեր բաժանման յորդ արտասուաց. գընա բարեա՛ւ:
Պոնտոս 3. Թ. ԳԱՅԱՆԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ
Կ Ա Մ
ՓՈՔՐԻԿ ԾԱՂՔԱՔԱՂ
ՀԱՏԸՆՏԻՐ ԲԱՆՍՍԵՂԾՈՒԹԵԱՆՑ
Հասցեաց
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԵՆԵԱՆ
Ազգային հին և նոր բանաստեղծներու գողարկի քերթուածներէն յօրինուած է այս փունջ, որ կազանդի աթիւ, որպէս ամեն ժամանակ, մանկանց նուիրելու յարմար գրքոյկ մ'է:
Կը գտնուի բոլոր հայ գրավաճառաց քով ի գին 100 փարսոյ:

ԳԱՒԱՌԻ ՀԱՅ ԳԱՍԱՏՈՒՄՍ ՎԻՃԱԿՆ

Դատ անգամներ լրագրաց մէջ կը կարգանք հայ վարժապետի կեանքը նկարագրող յօդուածներ : Մայրաքաղաքիս հայ ուսուցչական դասուն բարոյական ու նիւթական վիճակը մեր ամենուս բաջածանօթ լինելով, զանց կ'ընեմ աստանօր խօսիլ նորա վրայ, բայց գաւառի կրթական կեանքը գըրեթէ նոր եւ համեմատաբար հետաքրքրական է, ուստի եւ ժամավաճառ եղած չեմ ըլլար եթէ ընթերցողաց նկարեմ մի ճգրիտ պատկերն կրթական հաստատութեանց Հայոց եւ նոցա պաշտօնէից որ ի դաւառս :

Թուականէս քանի մը տարի առաջ պատեհութիւն ունեցանք առեւտրական գործով շրջիլ Փոքր Ասիոյ եւ Հայաստանի մէկ մասին գլխաւոր քաղաքներն, եւ ուր որ գնացինք, իր նախանձախնդիր հայ ժողովրդի մտաւորական յառաջդիմութեան, տեղեկութիւններ խնդրեցինք վարժարանաց, վարժապետաց եւ հասարակութեան բարոյական վիճակին վրայ : Գրեթէ առ հասարակ ո՛ւր որ գնացինք՝ տխուր տղաւորութեանց ներքեւ մեկնեցանք : Ժողովուրդը տգէտ եւ հետեւաբար անբարոյական մեծաւ մասամբ, վարժարանք անբարեկարգ եւ վարժապետք ընդհանրապէս նիւթական թշուառ կացութեան մէջ : մեր Պոլլիս շատ անգամ կը գանգատինք վարժապետական դասուն եղած անարգանաց դէմ, կ'աղաղակենք թէ դաստիարակը չեն գրաւած տակաւին մեր ընկերականութեան մէջ այն բարձր դիրք ու համակրանք՝ որ իրենց անվիճելի իրաւունքն է : բայց անգամ մը պէտք է Վոսիօրէն գուր ելնենք նախանձելու համար Պոլսեցի վարժապետին բարոյական ու նիւթական վիճակին վրայ : Ընդհանուր պատմութիւնը մեզ կ'աւանդէ թէ, հին ժամանակն, Հելլէնք, թէպէտ շատ քաղաքակրթեալ ազգ մը, չէին գիտեր իրենց կանանց յարգը, կը վարուէին նոցա հետ, ինչպէս կը վարուէին ձիու կամ շան հետ : կրնանք ըսել թէ շատ մեծ տարբերութիւն չը կայ գաւառաց այժմու դաստատուաց եւ հին Յունաստանի կանանց սեռին մէջ : Երբ Ձիւն կը գտնուէի : Եւզոկիոյ գաւառակներէն մին, լաւ կը յիշեմ թէ որ մը Աղաներէն միոյն տունը ճաշի հրաւիրուած ըլլալով, նշմարեցի բազմոցին մի անկիւնն երիտասարդ մը բարեւ բըռնած : իմացայ որ վարժապետն է գաւառակին : խօսեցայ հետը, զոչոչօճայն պատասխանեց, եւ երբ առաջարկեցի իրեն հայերէն երգ մը երգել՝ կ'ըսէր թէ աղաներն արգելած են նմա երգելն : Ո՛չ նուազ ցաւալի էր վարժապետաց կացութիւնն այլ գաւառաց մէջ : ամսականներ կը բարդուին իրարու վրայ մինչեւ եօթն, ութ, տասն ամիս, խեղճ վարժապետն, թերեւս բազմամարդ ընտանեաց տէր է, թերեւս ինքը կամ զաւակներն հիւանդ են : որո՞ւ հոգ, անդին ամեն մարդ կարեւոր գործ ունի : վարժապետը մեռեր է, թո՛ղ հատ մը պակաս ըլլայ, վայրապար Ազգին ստակը կուտէ կոր, ամեն օր ամազըլուն հաշիւ կ'ընէ, « ուղղական, սեռական, ամսու գըլխուն ամսական », ահա վարժապետին տեսած գործն : Սիրելի ընթերցող, ահա գաւառացւոյն տուած յարգն առ վարժապետըս, ահա անոնց վրայ ունեցած համարումն : եւ այս բաւ չէ, անխիղճ զրպարտութիւններ եւս չեն ամաչեր ընել նոցա

վրայ : սորա մի օրինակը տեսանք անցեալ օր Փոլսի պատուական լրագրին մէջ : մի յարգելի յօդուածագիր, Վահագն անուն, զոր ճանչնալու պատիւն չ'ունինք, մի փորձառու գաւառացի, յետ հարուածելոյ թաղէօս Պատուելի անուն անձ մը, բարեհաճած է նաեւ մի ընդհանուր տեսութիւն ընել գաւառաց ամբողջ դաստատուաց վրայ : նախ մեծաւ վեհանձնութեամբ յիշատակելէ յետոյ փոքրիկ բացատրութիւն մը ուսուցչաց, միւսները կը բաժնէ երկու դասակարգաց, շահագէտներու եւ կուուարորներու : Եւ արդարեւ կ'արժէ որ շահագէտ լինին գաւառաց դաստատուք, զի մինչեւ ամսական կէս ոսկոյ պատկառելի գումարն առնող դաստատուք պակաս չեն : եւ չ'արժէ որ կուսակցապետներ եւս լինին նոքա, քանի որ մենձ աղաներու ճխափողին կրակ մատակարարելու բարձր պաշտօնն ունին շատ տեղեր : « Վարժապետներ կեանք կրնան տալ գաւառի մը » կ'ըսէ պատուարժան յօդուածագիրն, արդարեւ տեսականապէս ստոյգ է ըսածն, բայց գործնականապէս նշանակութիւն չ'ունի մեր գաւառաց համար կրթական արդի խիստ յոռի դրութեամբ, որոյ գլխաւոր պատճառը դարձեալ գաւառացիք իրենք են մեծաւ մասամբ : բայց պատկառելի յօդուածագիրն արդեօք ինք իւր ըսածին կը հաւատայ երբ կը յարէ : « Եւ երբեմն ալ մեծ աղէտ մ'են գաւառին » : Ինքն թուի թէ Եւզոկիոյն գուր ելած չէ, և միայն իւր քաղաքը դիտելով ընդհանուր եզրակացութեան մ'է յանգած : Բայց նոյն խոյ եթէ Եւզոկիոյ մէջ կան այնպիսի դաստատուք, ինչպէս որ ինք կ'ըսէ, որք քաղաքին անդ որո՞ւթիւն են խանդարած կուսակցութեանց պարագլուխ հանդիսանալով, թերութիւնը պէտք է վերագրել դաստատուական խմբին՝ այլ Եւզոկիոյն լինելուն : Ձի բոլոր պտըտած քաղաքներու մէջէն, ցաւելով կ'ըսեմ թէ Եւզոկիոյ շատ յառաջ գընացած է երկպառակութեան մէջ : Յօդուածին վերջերը ճշմարիտ պատկերութեան խօսք մ'ալ սխալմամբ սպրդեր է յօդուածագիրն բերնէն : Բայց գաւառաց շատերուն ճշմարիտ պատկերութեանը, Պ. Հրազդանի ըսածին նման, Քարաքէօյի կամուրջին վըրայ Հրէից կէղծ ոսկի ծախելուն կը նմանի, զոր գաւառացիք ալ կ'ուզեն իբր ճշմարիտ հաստատել : Այլ մեզ ամենէն զարմանալի կէտն սա է որ, ի՞նչպէս հրատարակուած է նոյն օրինակ յօդուած մը, որ անտրքանք մ'է գաւառի ամբողջ հայ դաստիարակաց խմբին դէմ : Պէտք է ի մտի ունել գաւառաց բարոյական վիճակ, եւ թէ վերջապէս մեր վարժապետք, յարժար թէ անյարմար, եթէ ո՛չ շատ մեծ, գէթ ըստ բաւականին կարեւոր ծառայութիւն մը կը մատուցանեն ազգին : արդարեւ չ'ունինք կատարեալ դաստատուներ ի գաւառ, չ'ունինք համալրարանականներ, բայց թերութիւնը մերն եւ ոչ դաստատուաց : հասարակաց պաշտօնեայք ամենուրեք ժողովրդեան բարոյականի հայելին են : մեր ժողովրդեան թերեւս շատ խոյ են մեր վարժապետք : Աւրեմն, պէ՛տք է զանոնք մէկ մանգաղով հնձել : Քանի որ սկսանք խօսիլ գաւառի հայ ժողովրդեան վրայ քանի մը խօսք ալ ընենք անոնց անհատնու կոխներուն վրայ զորս ինքեանք սխալ պատճառներու կը վերագրեն : կուսակցութեանց գլխաւոր պատճառն է իրենց տղիտութիւնն որով երբեք զիբար չ'են կարող հասկնալ, երբեմն կուսակցութիւն մը կը ծագի այնպիսի սինլըր պատճառէ, որոյ վրայ մարդ նախ կը ծիծաղի եւ ապա ազ-

գային զգացմամբ կ'արտասուէ : սա ալ պէտք է գիտնալ թէ կուսակցութիւնը միշտ ծայրայեղ են : ես գիտեմ այնպիսիներ՝ որք ցմահ ատած են Առաջնորդ մը, իրենց ազգականի յուզարկաւորութեան կամ հարսանեաց հանդիսին ներկայ չը գտնուելուն համար : Ենթադրենք թէ երկու կուսակցութիւններ կան քաղաքի մը մէջ, Առաջնորդն որ կ'զլնն որ յարի, հակառակ կուսակցութիւնը կը վճռէ թէ Առաջնորդը վատ է եւ գործիք եղած մի քանի անձանց ձեռքն : Ո՛ր է է գաւառու պէտք չէ երեսօխտան կամ վարչութեան անգամ ըլլայ, միթէ կարելի՞ է որ մարգարիտն խողերու առջեւ նետեն, այն ատեն ահա կ'ուրը կը բրգի : Անկարելի է, այն որ վարժապետ է, պէտք չէ ազգային գործոց միջամտէ, պէտք չէ մեծ աղաներուն առջեւ խօսի, պէտք չէ անոնց առջեւ խառնէ սիկար խմէ, այլ թող արշաւունքները վարժարան, մինչեւ իրիկուն անգաղար դասէ, եւ ամազըլուն սպասէ որ ամսական առնէ : զայս կը յանձնարարենք գաւառացի դաստատուաց, քանի որ համազուած ենք թէ ասով միայն հանդիստ կեանք կրնան անցունել ի գաւառ :

Մ. Զ.

ԴԱԴԱՐՈՒՄՆ ԺԱՄԱՆԱԿԻ (ՊԱՐՍԻԿ ՎԵՊ)

Ով ժամանակ ալ դարձրէ : դարձեցէք ժամք բարեկան, Յարաւաստը ընթացք ձեր : Թոյլ տուք մեզի ճաշակել զարագասահ այն հաճոյս : Զոր կ'ընծայեն աւուրք մեր : Քանի՛ քանի՛ թշուառներ կը պաղատին հոս ձեզի, Անոնց համար սահեցէք : Առեք իրենց աւուրք հետ զիրենք տանջող հոգերն ալ : Այլ երջանկաց խնայեցէք :

Նոյն մտածութիւնըն, զոր մեծն Սատով ոտանաւորով բացատրած էր քանի մը դար առաջ, կ'երգէր գեղեցիկն Մետրուր գգուելով լւր երկայն ձերմակ ձեռքը կիւզւային թելերը : Իւր Հափըս բարեկամին մեծ հաւաչանք մը ընդ միջեց իւր երգերն : « Աւա՛ղ, բանաստեղծն իրաւունք ունի : Ո՞վ հարիւր անգամ չէ փափաքած կարենալ իւր կենաց տասը տարին տալ երջանիկ ժամ մը կեցնելու համար : Բայց անգութ ժամանակն աւելի ջը կենար վարդերուն քան նոճիներուն վրայ : Մարդս շատ թշուառ արարած մ'է » :

Այս ըսելով Հափըս իւր երկայն ծխափողէն հոտուէտ ծխոյ ամուլ մ'արձակեց, եւ վերցուց թողձութեամբ աշուրները գէպ յաստեղս որ կը փայլէին երկնից մութ կապոյտին վրայ : Ինչպէս կարելի եղաւ զիտեալ, Հափըս սիրով կ'իմաստասիրէր, երբ հարկաւ աւելի աղէկ բան մը չ'ունէր ընելիք, որովհետեւ խրախճանութեանց մէջ ղեժուարաւ կը գտնուէր աւելի զուարթ ընկեր մը : Այն երեկոյնն եկեր էր գեղեցիկ գիշերը վայելելու իւր Նասըր հօրեղբորօրո՞ւն ընկերակցութեամբ, իրենց Մետրուր բարեկամին տունն, Իսպահանի երիտասարդաց ամենէն հարուստն եւ ամենէն չքեղը : Երբեք ալ տեղաւորուեր էին սպառզամբին վրայ, գեղաղէք բարձերու վրայ ընկողմանեալ և գլխերն այնչափ սայժառ էր, հոփը իրենց այնչափ քաղցր հոտեր կը բերէր :

աստղերուն լոյսն այնչափ երազոտ բան մը ունէր որ իրենց խօսակցութիւնները կամաց կամաց թաղման վիճակէն քննուէր :

Հարկաւ, ըսաւ Նասըր՝ հարուստ եւ պատուաւոր վաճառականն, երջանիկ կ'ըլլար մարդ եթէ կարենար կենաց ընթացքին մէջ դադարիւր Այսպէս երբ իւր հարստութիւնը կատարեալ կը տեսնէ նա, ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ ապահովութիւն ըսել, կը մնամ հոն ուր որ եմ մինչեւ որ Ալլահ զիս իւր քով կանչէ, սնանկութիւնը, նաւակոծութիւնը, վաճառաց կորուստ, կարաւանի վնասներն ինձ չ'են կրնար ստնանել, այլ եւս կործանելու վախ չ'ունիմ, մինչդեռ ապագային խէթը կը պղտորէ միշտ ամենէն գեղեցիկ ճակատագիրն իսկ: Իրաւ չ'է՞, Հասան էֆէնտի: Նասըրին այս անուամբ կոչածն այն աշխարհին շատ յարգելի ալեւոր տէրվի մ'էր: Ինչպէ՞ս կը գտնուէր Մեսրուրին տան պատըզգամբին վրայ: Մարդ չէր կրնար ըսել զայն: Անոր գալը չէին տեսած, եւ Նասըր աշուրները վեր վերցնելով, զայն մեկէն ի մէկ առջեւը գտեր էր: Զարմանք չէր սակայն, որովհետեւ Մեսրուրին գերիները կը ճանչնային տէրվին, եւ անոցմէ ոչ ոք կը յանդգնէր այսչափ սրբակրօն մարդու մը կամաց գիտարել: «Մարդս կարող չէ բախտին գրքին մէջ կարգալ, պատասխանեց ծանրութեամբ իմաստունն, Ալլահ միայն գիտէ ինչ պէտք է մարդուն:»

— Հարկաւ, Ալլահ գիտէ, պատասխանեց Հաֆըս, բայց մարդս ալ կրնայ ունենալ իւր կարծիքն անոր վրայ, եւ ինձ համար կ'ուզէի կեանքս կասեցունել կարենալ մէկ ընտրած ժամուս, եւ քայլ մ'անդին չ'անցնիլ ժամանակին ճամբուն մէջ: Գու որ այնչափ ընտանեւոր կը խօսիս Ալլահին հետ, առաքինիդ տէրվի, այս խնդիրն ընելու էիր իւր Հաֆըս ծառային համար:

— Իրե՞ն պէս կը մտածես, Մեսրուր, գո՞ւ ալ, Նասըր: Անխոհեմք, խնդրածնիդ չէր գիտեր: Բայց ձեր փափաքածին պէս թող ըլլայ ձեր ընտրած ժամուն ձեր կեանքը պիտի կենայ, եւ այդ ժամը պիտի տեսնէ մինչեւ Աստուծոյ ձեր կենաց վախճանին համար նշանակուած ատենը: Զեզ անկէ ադէկ ընտրել ձեր ժամն: Եւ դու, շարունակեց իմաստունը դառնալով Մեսրուրին նարկիլէն բռնող գերեզման, դո՞ւ ալ բաժինդ կ'ուզես Ալլահին ընծայէն:»

— Ի՞նչ ընեմ, ըսաւ տխրութեամբ գերին, կենացս ոչ մէկ ժամը չ'արժեք որ կենամ: Ազատ չեմ: «Եւ եթէ ազատ ըլլայիր, ինչ կ'ընէիր, հարցուց տէրվի: — Լէյլային հետ կ'ամուսնանայի, եւ իմ ու անոր օրագրակը կը հայթայթէի պարկեշտ աշխատութեամբ մը:» — Ազգէկ, ազատ եղիր, ըսաւ Մեսրուր իւր գերեզման: Ահա քեզ քրտակ մը Լէյլային հետ ամուսնութեանդ նպատակը համար: Աստուծոյ իւր տուածին համար շնորհակալ ըլլանք, եղբարք, եւ իրարու խոստանանք իմացնելու թէ երբ ճակատագիրնիս պիտի կասեցունենք, Նասըրն մենէ ո՞վ ամենէն առաջ պիտի երջանկութիւնն ստանայ:»

«Կերպունք, ըսին չորսն ալ միաբերան» եւ զատուեցան: Տէրվին աներեւութացեր էր: Ա՛յ Նասըր վաճառականն, ո՛չ Մեսրուր բանաստեղծն, ո՛չ Հաֆըս զուարթ ընկերն, ո՛չ Նուրէտտին ազատագրեալ ստրուկն, Աստուծոյ պարգեւէն օգտուելու չ'աճապարեցին: Անշարժ ընել իւր կեանքը: Զայն ժամուս մը յուսել, որչափ հեշտալի ալ ըլլայ, ծանր եւ քիչ մը սոսկալի սրտում

մ'է: Նասըր իւր տունը վերադառնալով, բացաւ տետրերն, եւ իւր հարստութեան հաշիւն ըրաւ: Գեղեցիկ էր հարկաւ, եւ իրեն կրնար օղտել: Սիրուն տուն մը դեռ նոր շինել տուեր էր եւ իւր ճոխութենէն բան մը պակաս չ'էր: Բայց այսչափ գեղեցիկ ճամբու վրայ կենալու էր: Զորս նաւ ունէր գէղ յԱրաբիա առաքատող, շորս նաւ ընտիր նաւաստեօք եւ բարեչէն: Երբ իւր սպասած խնկոց եւ թանկագին ապրանքներն ընդունէր, պիտի կրնար գնել մեծ պարտէզն որ իրենին կից էր, եւ որոյ այնչափ ստէպ, իւր պատշգամբէն, հիացած էր զով հովանեաց եւ կարկաջող ջուրը վրայ: Կարապանը գալու մօտ էր, անոր սպասելու չ'էր: Միայն քանի մը շաբաթ մնացեր էր: Նասըր սպասեց, կարապանն եկաւ, վաճառքներն ադէկ ծախուեցան, եւ Նասըր պարտէզը գնեց: Բայց նաւերէն մին կորսուած էր: Այս կորուստը դարմանելու չ'էր: Նասըր նոր գործոց մէջ նետուեցաւ: Եւ վերջապէս դեռ շատ ալ երիտասարդ էր կենաց մէջ կասելու համար, եւ իւր հարստութիւնն, որչափ ալ գեղեցիկ ըլլար հետու էր հաւասարելէ իւր Ալի դրացւոյն, վաճառականին գոհարեղինաց: Նասըր իւր տուրեւաւը շարունակեց: Կը փափաքէր մարգարէին գերեզմանն այցելել, ինչպէս պարտքն է ամեն ճշմարիտ հաւատացեալ, եւ այդ ճամբորդութիւնը չէր կրնար ընել բայց եթէ իւր արժանեաց եւ կարեւորութեան վայելուչ ուղեկիցներով: Աւստի վաստկելու էր ճամբորդութեան ծախքն: Երբեմն Նասըր կորուստ մը կ'ընէր, այն ատեն կը ջանար զայն դարմանելու: Չէր կրնար ինքզինքը դատապարտել իւր մնացեալ կենաց մէջ առաջուան եղածէն նուազ հարուստ ըլլալու: Եթէ վատուի մ'ընէր, այս վատակն անմիջապէս իւր գործածութիւնը կը դանդաղեցնէր եւ իրեն նորէն վաստակելու փափաք կուտար: Այնպէս որ տարիները կ'անցնէին եւ Նասըր ամեն ատեն փնտրելով ժամանակն իւր կեանքը կասեցունելու, դեռ գտած չէր:

Հաֆըս որ հաճոյքը կը սիրէր անմիջապէս իւր ծրագիրն պատրաստեր էր, ամէն հաճոյք ճաշակել, եւ կենալ այն ատեն երբ ապահով թուէր իրեն լաւագոյնը զըտնել չկարենալ: Բայց միթէ այսպիսի ապահովութիւն մը կարելի է ունենալ: Հաֆըս չը յարգեցաւ, բաւական շուտ յափրանքին հասաւ եւ հաճոյքներէն տաղտկացած, փառասիրութեան տուաւ ինքզինքը:

Եթէ կայ կիրք մը որ մարդու չը ներէ կենալ եւ ետին նայիլ անտարակոյս փառասիրութիւնն է: Ի վաղուց անտի ունեցածը բան մը չէ, արդի ունեցածը քիչ է, ինչ որ փափաքելի է, ինչ որ մարդուս անզուսպ բաղձանք կ'ազդէ չ'ունեցածն եւ իրմէ վեր եղածն է, ամեն ինչ որ դժուար է, ինչ որ անկարելի է ստանալ:

Հաֆըս պաշտօններ, պատրուներ խընդրեց եւ երբ զանոնք ստացաւ, աւելի մեծերն կ'ուզէր: Կեցնել իւր կեանքն երբ այս ինչ, կամ այն ինչ մարդն՝ որ իրեն սրժանիքը չ'ունէր, իրմէն աւելի բարձրաստիճան էր, երբ իւր անուան համբաւը իւր քաղքէն անդին չէր անցներ: Պէտք էր որ բոլոր Պարսկաստան զայն կրկնէր, բոլոր արեւելք զայն ճանչէր, եւ Հաֆըս Նասըրին պէս կը ձգէր որ տարիներն անցնին առանց Ալլահին պարգեւէն օգտուելու:

«Որչափ գեղեցիկ է կեանքս, ինքնիրեն ըսեր էր Մեսրուր: Երիտասարդ եւ գեղեցիկ եմ, ո՛չ հիւանդութիւն եւ ոչ ցաւ կը

ճանչեմ, հարուստ եւ անկասկած, կրնամ ձեռքս տարածելով ճամբուս վրայ աղքատութիւնն սիրովել, եւ պաշտօնս ամենէն գեղեցիկ սրահին մէջ, բաւ է որ բանամ քանի մը ձեռագործ թերթեր խօսակցելու համար ամեն ժամանակաց ամենէն վսեմ մտքերուն հետ: Ո՞ր երջանկութիւնն իմինիս հետ բաղդատելի է, եւ ինչ ապէ աւելի կրնամ սպասել:» Գնաց իւր գրատունն եւ գիրք մ'առաւ: Նոր բան մը չը կայ արեւին տակ, ըսաւ Սողոմոն մեծն, բայց որովհետեւ բոլոր հեռութիւնք որ հրեայ թագաւորին արհամարհանքը կը գրգռէին, բոլորովին անծանօթ են ամեն մարդու որ այս աշխարհ կուգայ, հարկաւ պէտք է որ ըստանանէ հոգն եւ հաճոյքն իրենց հետ ծանօթանալու, եւ այս ծանօթութիւնն ընելը շատ երկայն ըլլալով, վերջապէս չը կան մարդկային արարածներ որ ալ նոր բան մը չը գտնեն արեւին տակ:

Մեսրուր շատ նոր բաներ գտաւ իւր գրոց մէջ, որով փափաք զգաց ուրիշներու մէջն ալ հետազօտելու: Աւրջն որովհետեւ քնոյ պէտք ունէր, գնաց հանգչելու, խոստանալով ինքնիրեն շարունակելու յաջորդօրն իւր ընթերցումն, ալ աւելի բան սորվելու համար, եւ դեռ իւր կեանքը չը կասեցուց այն երեկոյին:

Գիտութեան տեսչը մեծութեանց փառասիրութեանէն աւելի զիւրամաստոյց չէ, միայն աւելի ազնիւ եւ աւելի ողջամիտ է: Մեսրուր, անգամ մը որ իւր միտքն հետաքրքրութեան ընթացից մէջ ուղղեց, ինք զինքն զգաց սովորելու ծարաւով պապակեալ:

«Կարգալ միշտ միեւնոյն բանաստեղծները, մինչեւ վերջը Սաատիի կազմներն յեղեղել, գոց գիտնալ հին իմաստնոց պատմութիւններն եւ Պարսկաստանի տարեգրութիւնը, իմ մատենիցս մէջ պարունակեալ ամեն գիտութիւնները ճանչել, միթէ անհանդարտ հոգւոյս համար բաւական է: Զը կայ արդեօք միւս երկիրներուն մէջ ուրիշ բանաստեղծ սիրուելու արժանի, ուրիշ պատմութիւնք ճանչցուելու արժանի: Գիտութիւնն ըրած չէ՞, չընէր անգաղար նոր յառաջգիտութիւններ: Կուզեմ սորվիլ, կ'ուզեմ ճանչնալ: Ալլահին պարգեւէն օգտուելու ժամանակն եղած չէ տակաւին:»

Հապա Նուրէտտին, խեղճ ստրուկը... Լէյլային հետ ամուսնացեր էր, եւ երջանկութեան ծայրն հասնելով՝ ազատ եւ սիրուած ըլլալուն, այն ներկայ ժամուն սիրով իւր կեանքը կը շղթայէր: Բայց Լէյլային նայեցաւ, ստուար պատառ մը հագած էր, եւ ճամբուն քարերն իւր փափուկ ոտքերը կը վիրաւորէին: Ժպտելով, տան դժուարին խնամքները կը կատարէր, եւ իւր անգոր հասակը շատ ծանր բեռերու տակ կը հակէր: Շատ խիստ էր այն անկողինն ուր իւր յոգնած մարմինը կը հանգչեցունէր երեկոյին: շատ աղքատիկ էր տնակը զոր Նուրէտտին կրցեր էր իրեն նուիրել: Եւ զինք պիտի դատապարտէր ամեն ատեն այսպէս ապրելու: Ոչ, իրեն համար պիտի աշխատէր, եւ վերջն երբ իրեն կարենար տալ հանգստութիւնն եւ հարստութիւնն, այն ատեն, Ալլահին ընծայէն օգտուելու ժամանակը կ'ըլլար:

Երկու հոգւոյ աշխատակցութիւնը քաղցր բան է, եւ զգուշութեամբ եւ խնայողութեամբ, կրնան աղքատութենէ ազատիլ: Քանի մը տարիէն Նուրէտտին եւ Լէյլա հանգիտ կ'ապրէին, մինչեւ իսկ ամենքն կ'սկսէին նախկին գերին յարգել

իբր Իստահանու ամենէն պատուաւոր գործաւորներէն մին, եւ եթէ պահած ըլլար իւր առաջուան բաւականասիրութիւնն, այն ատեն պիտի կրնար կասեցնել իւր կեանքը: Բայց զաւակներն եկեր էին: Կարելի է հրաժարիլ անոնց մեծնալը տեսնել, տեսնելէ պզտիկ աղջիկը կամաց կամաց գեղեցիկ կին մ'ըլլալ իւր մօր նման, մանչն ալ իւր նմանեաց օգտակար մարդ մ'ընել: Այլ, շարունակելու էր աշխատիլ իրենց համար: Եւ վերջը, երբ երիտասարդ աղջիկն իւր ընտրած ամուսնոյն հետ դնաց, երբ երիտասարդ մարդն եղաւ ընտանեաց տէր, հրաժարելու էր ուրախութենէն իւր թուներն օրելու իւր ծնգաց վրայ: Այլ, Նուրէտտին չէր կրնար Ալլահին պարգեւէն օգտիլ:

Չորս երիտասարդը չորս զլխիկոր ծերեր դարձած, զիրար գիմաւորեցին օր մը գերեզմանատան նոճեաց տակ: Զիրար ճանչցան եւ ողջունեցին:

«Մենէ ոչ ոք ուրեմն չը դադրեցուց իւր կեանքն, ըսաւ Նասրը ընկերոջն: Ես, Պարսկաստանի ամենէն կարեւոր հարստութիւնն ստացայ: Նաւերս ծովերը կը ծածկեն, եւ աշխարհիս ամեն նաւահանդիստներուն մէջ զբասեղաններ ունիմ: Եթէ վերջին ձեռնարկներուս մէջ յաջողիմ, կ'ուզեմ միայն ինձ համար քաղաք մը հիմնարկել, հոն ապրելու պիտի երթամ, եւ կարելի է այն ժամանակ ձակատագիրս կասեցընեմ:

— Փոխարքայ եմ, յանուն թագաւորին կը հրամայեմ, պատասխանեց Հաֆըս, բայց բաւական չէ: Ո՞վ զիտէ թէ ինչեր կը սահմանէ ինձ դեռ բազմը: Սպասե՛ք. տեսնենք թէ ե՛րբ է ժամանակը կեցնելու միջոցը:

— Գիտնալ, ես քան զեւս սովորիլ, մարդկային գիտութեանց բաժակը պարզելու դեռ հետազօտեմ, եւ ամեն ժամանակ, մինչեւ որ աշխարհիս վրայ ինձ անձանօթ բան մը չը մնայ: Այս է ուխտս: Մինչեւ այն ատեն, բարեկամք, չեմ կրնար հաւանիլ Ալլահին պարգեւէն օգտուելու:

Այսպէս խօսեցաւ Մեսրուր:
«Թոռս կը թոթովէ, կ'ուզեմ անոր խօսիլը լսել, աղջկանս զաւակը գետինը կը տնայլտի, զայն դաշտերուն մէջ վազվազել տեսնելու կ'երազեմ: Ինչպէս որ զաւակներըս մեծնալ տեսայ, այնպէս կ'ուզեմ թուռանցս մեծնալը տեսնել: Միայն երբ մարդ հայր ըլլայ ծերանալ կ'ուզէ, եւ շատ պիտի վշտանար եթէ իւր կեանքը կասեցնէին»
Այսպէս խօսեցաւ Նուրէտտին: Մերուկ մը, նոճիներուն մէջէն յանկարծ երեւան ելաւ:

— Զիս կը ճանչէ՞ք ըսաւ: — Հտտան տէրվիչը, գոչեցին չորսն ալ միաբերան: Հայր իմ, միթէ մահուան հրեշտակն յարգեց՞ ձեր զլուխը: Երբ երիտասարդ էինք, դուք ծեր էիք, եւ հիմա որ խորշովեալ եւ ալեւոր ենք, դուք փոխուած չէք: Աստուած իւր սուրբերը կը պաշտպանէ:

Տէրվիչը ժպտեցաւ:

«Աստուած զիս ձեզ դաս մը տալու համար ընտրեց, ըսաւ: Վերջապէս հասկցէք որ ինքն միայն իմաստուն է, ինքն միայն գիտէ ինչ պէտք է մարդուն: Երջանկութիւնը կ'անցնի, եւ երազ մ'է ուղեւ զայն յերկարաձգել այս աշխարհիս վրայ ուր ամեն բան անցաւոր է:

Հազիւ կարծեցիք կարող ըլլալ զայն ընելու, այլ եւս չ'ուզեցիք: Այլ մէկ ժամ մարդուս կեանք մէջ, չարժեր ամեն ատեն

կեանքը: Երջանկութիւնը միայն Ալլահին քովն է եւ բոլոր այն ուրախութիւնն որ լուսաւորեց ձեր երկրաւոր կեանքը միայն իւր ժպտին զստացումն է, զոր ձեր վրայ կը ծագեցնէր՝ ձեզ կանխաւ երկնից ճաշակ մը տալու համար եւ անոր փափաքն ի ձեզ ներշնչելու համար: Այլ ոք կրնայ ժամանակը շղթայել, եւ եթէ կարենար, բոլոր իւր ապագայն անձանօթին՝ եւ սրտակէզ կսկիծներուն պիտի մտնէր: Տարբեր ճամբայներ ընտրեցիք եւ ձեզմէ ո՛չ ոք չը գտաւ ժամ մը յորում յանձն առնուր ամեն ատեն մնալ: Ճանչցէք ձեր երիտասարդութեան երազոց ոչնչութիւնն: Ալլահ միայն իմաստուն է: Ալլահ մեծ է, օհնեալ ըլլայ Ալլահ: Այս խօսքերէս վերջը տէրվիչը բարձրացաւ եւ կարծես թէ կը մեծնար: Իւր երեսին խորշովները կը պարզէին, եւ երիտասարդութեան գոյները ծերութեանց դժգոհութեան տեղը կ'անցնէին: Երկայն խարտեաշ մազերն իւր պարանոցին վրայ կը ծածանէին, եւ իւր ուսերէն դուրս ծաւալեցան երկու սովորակ թեւեր: Իսկայն դանձր բացաւ, կապուտակին մէջ հօլաթեաց, եւ երկնից բարձրութեան մէջ անհետացաւ: Չորս ծերերը ծուռնի վրայ եկեր էին: «Ալլահ իւր հրեշտակը մեզ զրկեց, ըսաւ Մեսրուր յոտն կանգնելով: Ալլահ միայն իմաստուն է: Օրհնեալ ըլլայ Ալլահ:»

Թարգ. Օր. Ն. Է.

ԵՐԱՍԽԻ ՏԵԼԴԱՆ

Ըստ Մովսէս Մարգարէի Դրաստին բըզլաող չորս գետերէն մին է Երասխ, զորս ի զիրս Յննդոց կ'անուանէ Գեհոն: Սոյն գետին անունն ըստ ամենայն հաւանականութեան ծագումն առած է Հայկազանց Արամայիս Նահապետի թուռն Արաստ կամ Երաստին անունով, զոր օտարագիրք եւ ուսուհայք կ'անուանեն Արաքս, իսկ Արաբացիք՝ Արաս կամ Ռոս: Երասխ անդրանիկ երկու ակերն այժմ կը բղխին Խնուսի Շուշար գաւառի հարաւային-արեւելեան սահմանաձայրերը գտնուող Համզան եւ Եաքան գիւղերէից մօտակայ Բիրակին կամ Պին-Կէօլ լեռան ստորոտներէն, ուստի սոցա միացեալ ձիւղերուն մինչ ի Բասան հոսանքը ցարդ ի թրքաց կ'անուանուի Պին-Կէօլ-Սույու: Իսկ անկից ց'Քէօփրիւ-Քէօյի Բասեն-Սույու, ուր ընդունելով իւր մէջ Բասենի հարաւային լեռնէն եւ Տէփէ-Պոյնիէն բղխող Մուրց գետի օժանդակներն ըստ տաճկաց Հասան-Փուլէ-Սույին կը բաժնէ զԲասան գաւառ վերին եւ ստորին անուամբ երկու մասերու ու կ'երթայ յԱրարատ Բարթոլ լեռան ստորոտէն, Երուանդակերտ հին քաղաքի առջեւէն անցնելով, ուր կ'ընդունի իւր մէջ Ախուրեան գետի Գարուայ լճակին ելած օժանդակին, որ կ'անուանուի Արփա-Չայի կամ Կիւմրի-Սույի վերջին համանուն քաղաքին առջեւէն անցնելուն համար: Երասխ գետն Արաքս անունը կ'ստանայ Քէօփրիւ-Քէօյի առջեւ, որպէս եւ կամրջի չի համբերող մակնունն, ուր շինուած է եօթը կամարով մի քարայէն եւ հոյակապ կամարը 300 մեթրոյ երկայնութեամբ, 30 մեթրոյ բարձրութեամբ եւ 10 մեթրոյ լայնութեամբ: Սոյն կամրջին համայն ոտքերուն վրայ կամարով ծածկուած է, մէջերը պարզապ իրբեւ սենեակ, որոյ օտից հաստութիւնը հազիւ մի մեթրոյ

կը լինի: Սոյն կամրջի չորրորդ ոտքի դրսի գին կամրջիկէ մ'ալ շինուած է, որոյ ներսը կայ մատուռ մը խաչքարաւոր, յորում կը մտնեն պատուհանէն ուխտաւորը կամարըն վար կախուելով: Սոյն կամրջին հիմնադրութեան գիւտը սխալմամբ կը վերագրուի մի հովուի, որոյ անուամբ կը ճանչնան շատեր. վասն զի գտնուած է անցեալ տարուան կամրջին նորոգութեան մի հայերէն արձանագիր, որոյ ինչ ինչ բառերն թէպէտ եւ եղծուած են եղեր, բայց կը կարգացուին Ռ. թուականը եւ զԽաչքար բառն, յորմէ յայտնի է թէ Վաղարշ թագաւորի շինել տուած է. յիշեալ արձանագիրը ցարդ կը գտնուի կամրջին ոտքերուն վրայ: Սոյն կամրջին Չօպան-Քէօփրիւսիւ կոչուելուն միակ պատճառն ըստ իս հոն գտնուած հովուի մը գերեզմանն է ուր կայ նաեւ ուխտատեղ մ'ալ հայոց եւ թրքաց:

Երասխ գետն Արարատայ դաշտին մէջէն կ'անցնի, ուր մերձ ի նախին Արատա քաղաք կը կլէ Երէջ կամ Գըզըլ Բլրի Մեծամօր լճակէն սկզբնաւորուող Աեւ ջրի կամ Գարասուսի վտակն, հանդերձ Քասախ գետով, որ կը բլխի Նիգ գաւառի Արագած սարէն: Հոս յիշատակութեան արժանի են Քասախի Վաղարշապատեցոց տուած թանկագին օգուտներն եւ Մեծամօրի կամ Աեւ յուր վտակի շամբուտ ձախիներն, ուր թափառեցաւ երբեմն արքայն Հայոց Տըրդատ այսահար Հեփիփիմեանց կուսանց նահատակելու խժդժութեանց երեսէն: Երասխ Արարատայ դաշտին մէջ սաստիկ եւ արագ հոսանք մը սնի, ընդարձակ տարածութեամբ, որոյ յորդման փլուսներէն զերծ չեն իւր եզերքը բնակող գիւղացիք: Ասոր ջուրն է ազիւ եւ առողջարար, Արարատայ բնակչաց միակ ըմպելին, առանց որոյ կարելի չէր բնակութիւն հաստատել այդ կարի չոգ դաշտին մէջ: Երասխն Արարատցոց խմուելու ծառայելէ վերջ ասպնջական հանդիսացած է իրենց արտերն եւ պարտէզներն եւս ուղղելով, բազմաթիւ առուներու բաժանմամբ, որոյ մէջ կան նաեւ մեծամեծ ձկնիք ցանկացողաց իրձն յագեցնող: Երասխի եւ իւր մեծամեծ օժանդակաց վրայ տեղտեղ շինուած են կամարջներ ի կողմանս Արարատայ, ինչպէս մերձ ի Մարգարի գիւղ՝ Իգտիլէն Երեւան գացող ուղիին վրայ, որպէս եւ Գարասուսին վրայ մերձ ի Ա. Էջմիածին եւ: Մարգարի գիւղի Երասխայ կամարջն անցեալ տարուայ գարնան բըռած լինելուն կը պործածուի այժմ այն տեղ նահապետական տաշտածեւ նաւակ մը, որով երթեւեկողն ոչ նուազ գաղափար մը կը կազմէ նախահան նաւարկութեանը վրայ:

Երասխ գետ այսպէս յառաջանալով գէպի կոտայք գաւառ, հոն կ'ընդունի իւր ծոց Հրազդան կամ Զէնկի գետին երկու միացեալ ձիւղերն, որոց միոյն ծնունդը կը վերագրուի Նիգ գաւառի Պնձահանք սարի, եւ միւսը Մեւան ծովակին: Հրազդան ալ ունի Երեւան քաղաքի առջեւ չորս կամարով կերտուած կոխածոյ քարերէ հաստատուն կամարը մը, իբր մի գարու ճարտարագետական նմոյշ, որոյ վրայէն կ'երթեւեկեն ընդ միշտ բեռներով եւ մարդերով բեռացուած սայլեր, եւ որոյ ընթացքն հրաչք կը գործէ Երեւանցոց, իրենց զանազան ջրաղացները, գործարանները դարձնելով, արտորայք, պարտէզք ջրելով եւ ըմպելի ջրերին հոգալով: Երասխայ Արարատեան վերջին ձիւղն է Կեղամայ լեռնէն բղխող Ազատ գետն, որ մերձ ի վանս Խոր-

Վերադառնալով Ս. Գրիգորի Հրապարակի բերանէն բառական վար կը թափի յԱրաքս, ուր հրամայեցաւ կուտայ Արաքսն իւր Արաքստեան բազմաշարանակ հովտին եւ կ'երթայ գէպի Մաղարայ լեռն, Հոն կ'ընդունի նաեւ Մահուայ դաշտին հայոց արեւմտեաներկուսի Տղմուտ գետն, որոյ հետ է կանխաւ միացած Գայլատայ լճակին Պալըզի-Չայը եւ Թանարէկի Սինէք-Վտակն, ու կ'անցնի կը հոսէ գէպի Սեւեանց նախնադն անտի Փայտակարան, որոյ Պալատան դաշտին մէջ միաթթուելով իւր եղբարց Կուր եւ Արոտնայ մեծահազակ տեղական գետերուն, կը թափի Կասպից ծովն, իւր ամբողջ ընթացքն արեւմուտքէն արեւելք Մեծ-Հայոց երկիրներու մէջէն օձաօտոյտ կատարելով, յորում տեղ տեղ սահանքներ կամ քարաւազներ ալ կ'ընէ գտնիվոյր երթալով: Երասխայ երկայնութիւնը Կովկասեան աշխարհագրէաբ կը հաշուեն իւր 700 հազարամետր: Երասխայ Տեղաշին վրայ էր շինուած ի հնումն Վաղարշաան, Երասխագահերա, Արտաշատ, Արմաւիր եւ Նախիջաւան քաղաքներն, որոցմէ վերջինը ցարգ ծանօթ է, իսկ առաջինը՝ կը հաստատուի լինիլ վերին Բասեանի Քէօփրիւ-Քէօյ աւանն որ է ըստ Խորենացոյն Երասխայ եւ Մուրց գետոյն խառնուած տեղն, որոյ մէջ եղած աւերակը, գերեզմանատունը եւ հիւշէն պալատաց մնացորդ փլատակը ալ կը վկայեն: Երկրորդը՝ ճակատք գաւառի Բարթող լեռան ստորոտի արդի աւերակ քաղաքավայրը: Երրորդը՝ Խոր-Վերապի կից բլրավայրն, իսկ չորրորդն՝ Արաքսածոտն գաւառի մէջ ցոյց կուտան ամանք, զոր շինեց Արամայիս Նահապետն, որ էր երբեմն մայրաքաղաք Հայկազանց կամ Արշակունեաց, բայց ես հոս միայն անձամբ այցելած չը լինելուս՝ բաւ կը համարեմ այս չափով գոհանալ եւ խօսքիս թելը կտրել:

ԱՇՈՏ

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (16)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

10.

Երեկոյ էր. օգտտոսի վերջին օրերի այն զուարթ երեկոյներէն՝ ուր լեռնային անուշ բամբ մը կուգայ Մասիսի սրտէն խափել յարզը մեր բարի գեղջուկների քրտաւք սնած ցորենի պարարտ հատիկներէն: Խիզանի, Մոկայ եւ ուրիշ մէկ երկու լեռնային երկիրներն՝ ուր կը սրտախն ո՛չ միայն ընդարձակ դաշտերն, այլ եւ բացակայ են պղզտիկ հովիտներ, ընդհանրապէս իրենց կալեր կը շինեն՝ տուների տանեաց վրայ ու մշակած բոլոր արմախք ցորեն, գարի, տարեկան, աշնցան*) որքան ալ հեռի գտնու-

*) Այս լեռնային երկիրների մէջ՝ բացի վերոյիշեալ չորս տեսակ սերմերէն ուրիշ ո՛չինչ չը մշակուիր, թէեւ երկրի հողային զանգուածը բազալրուած է առ հասարակ կային եւ աւազուտ խաւերով: Բանջարեղինաց տեսակներէն միմիայն շոգգամն իւր ցեղը պահած է հոս, եթէ ո՛չ, միւսներէն է ո՛չ մինն կը գտնուի: Լեռների վրայ՝ բը-

ուին, կանակով (իրենց բառով շիւով), այդ կալերի հիւսիսակողմը շինուած կալատունները (երեք կողմէն ծածկուած մէկ կողմէն բաց բառական լայն մի շէնր) կը դիպն ու հետզհետէ կրնան կ'սկսին այդ քաղաւած ու խորձ կալուած ցորեն եւն կալել (եզներով եւ կամնով մանրել): Եւ ահա մինչ կալերի եւ ծածկանակը լինելով այդ երեկոյ իսկ Տանուտէր Սիրունի կալը կը քէլին ու Ստուեն թէեւ լեռնարտաէն նոր իջած սուկայն իր արտաքոյ կարգի ետանդն ու աշխատասիրութիւնը զինք հոն մըլած, մերթ որայները կալի մէջ կը ցանէր, մերթ հեծանոցով մանրուածները տակնուվրայ կ'ընէր ու մերթ խոտաղ Յարոյի ձեռքէն եզները մտրակող կակուզ վարոցն առնելով իր սիրելի (Փուխոն ու Առիւծը (եզների տուններ են) քէլով անուշ ձայնը «հորէ մէջ սիրուն աղբեր, հորէ մէջ՝ կ'երգէր, անպին Սրտակ ընկերապարկ տատարակի մը նման իրենց տանիքի վրայ՝ պարզուած գերանի մը վրայ նստած, ու իր լուսացայտ ակնուղիք դէպի Ստուենի կողմ յառած, երբեմն կը գեղգեղէր հատակաուր երգերի հատուած ու երբեմն կը յափշտակուէր:

Տանուտէր Սիրուն իր գրան առջեւէն վաղը առուակի եզրը հասարակ աթոռի մը վրայ նստած՝ իւր կարմիր կեռասենի չըպուզ (դալոն) առուակի միւս կողմը երկընցնելով կը ծխէր եւ կը մտածէր ու գիտես թէ իր այս մտածումը խորհրդաւոր էր: Մէկ էլ անտեսա որ իրենց դրացի գիւղերէն միայն բնակիչներէն վաշխասու եւ հարուստ Մըլսի Մրդար՝ ուրիշ մէկ քանի ընկերներով գիւղի հարաւային կողմի առլեփ ձանապարհէն ուղղակի Տանուտէր Սիրունի դրան սուքե ելնելով «Բարի երեկոյ Տանուտէր Սիրուն՝ խնամ Աթոռ կ'ըսեն»: Տանուտէր Սիրունն ստիքի ելնելով «Աստուծոյ բարին» կ'ըսէ ու իւր աթոռը Մըլսի Մրդարին հրամայելէ ետք, դէմը դէպ տանիքը դարձնելով «Ստուեն, Ստուեն շուտով տնէն 2-3 աթոռ բեր» կը ձայնէ: Ստուեն արագաթեւ թռչունի մը նման, մէկ ակնթարթի մէջ կը պատրաստէ իւր հօր հրամայած նստարանն, ու ապա՝ ջրի սափորն իւր ուսին վրայ դրած գիւղի աղբիւրը կը վազէ՝ որոյ նկարագիրն արդէն ծանօթ է: Երկու վայրկեան չ'անցած Ստուեն կաթնահամ պաղ ջուր բերած պատրաստած ու հողէ պարզ փորջի (պարտաղի) մը մէջ լեցնելով իրենց հիւրերին կը հրամայէր, որոնք այդ անմեղ աղանիկ շնորհալի շարժումներէն ու պարզ ձեւերէն աւելի ախորժեղով, կը խմէին այդ անմահական ջուրն ամենամեծ հաճոյքով, ու Ստուեն ամենու ձեռքերին կը նուիրէր իր համեստ համբոյրներն:

Վարդ խաթուն անական մանր ու մուկը գործերով զբաղած լինելուն շուտով չը կըրնար զուրս ելնել ու իրենց հիւրերին բարի գալուստ մաղթել: Գիշերուան ժամը կէսին

նական վիճակաւ՝ ծլուզ, սպիտակուկ, օզին, նվիկ, կանկար, գտալուձ եւ գեռ ուրիշ վայրերի բանջարներ գարնան վերջերը՝ կրնան եւ աղջիկներ լեռնէ լեռ թափառելով, խաղ կանչելով ու քէֆ անելով կը քաղեն կը շորցնեն ձմրան պաշարի համար: Այդ գեղործութիւնը շատ արդիւնաւոր կրնայ լինիլ այս երկիրների մէջ, բայց միայն թիզանի հարաւային կողմի բնակիչները փոքր ինչ իրենց զբաղմանց առարկայ ըրած են զայն, եւ սակայն ասոնց ամենն ալ իրենց յետադիմութեան պատճառներն ունին:

կը մօտի: Երբ Վարդ խաթունն ընթրիքի նահապետական առատ սեզանի կերակուրները պատրաստելէ ետք ծածկանակ կ'ունենայ ձեռք, գուրս կ'եղէ հիւրերին «Բարի էք եկեր» ըսել: Վերջապէս երեկոյեան ընթրիքը կը վերջացնեն այն անկեղծ ու պարզ ձեւերով ու մեծարանքով որոնք մեր գիւղական կեանքի յատկանիշներ կը կազմեն: Ապա Մըլսուսի Մրդար իր գալձ սարքելով անսիրտ վաշխասուի մը գոռոզ ձայնով Տանուտէր Սիրունին կ'ըսէ.

— Խնամ՝ Սիրուն, ես կը սգլէի՞ որ դու մեր դալու պատճառ հարցնէիր, բայց կը տեսնեմ որ դու ձայն չես հաներ, էլ մէջ՝ ես դ'ամօթ կը փախցում:

Տանուտէր Սիրուն. — Ի՞նչ պիտի հարցնեմ, մէհմանն՝ որ կայ Աստուծոյ մէհմանն է: Դուք լսո՞ զարիպ չէ՞ք, բարո՞վ, հազար բարով էք եկեր:

Մըլսին. — Աստուած քս տուն չէն պախէ, ու քս տղովթ շատ ընէ՞, բալէ՞ պէտք է Փըրիս՞ որ մեզի պէս մարդեր երբ բընով՞ ուրիշ գիւղացիի մը տուն կ'երթան, էնտնց՞ մտքին բան մը կայ:

Տանուտէր Սիրուն. — Ես ի՞նչ գիտամ՞ ձեր մտքին: Խեղ եղնի՞:

Մըլսին. — Ինչալայ խէրայ՞ ու խընդումն էլ ետեւնայ՞: մենք երկէն բարակ խօսիլ չենք գիտեր, եկեր ենք բո՞ աղջիկ կ'ուզէք: Դուն էլ շաքար մը կեր՞ տեսնենք:

Տանուտէր Սիրուն պահ մը լուռ մնալէ եւ քանի մը նեֆէս բարկ-բարկ չըպուզ քաշելէ ետք կ'ըսէ. «Եթէ Աստուած կամեցեր է կ'եղնի, եթէ չէ, մեր ձեռքէն ի՞նչ կ'եղնի»:

Մըլսի Մրդարն իւր խորագիտութեամբ տեսնելով Տանուտէր Սիրունի ներքնապէս իրեն համարած լինելը՝ կ'ըսէ. «Աստուած կամեցած է ու մեր սիրտն ալ դձեղ ու ձեր բարեկամութիւն սիրած է: Էլ մարդն ի՞նչ կրնայ ընել»:

Տանուտէր Սիրունին թէեւ ուրիշ տեղերէ ալ առաջարկութիւն եղած էր ի մահին Ստուենի ուզելուն, բայց նա դեռ ո՛չ մէկուն հաճութիւն չէր տուած: Մէկ քանի անգամ էլ Սրտակի հայր Պ. Մկրտն անուղղակի կերպով նմա առաջարկած էր Ստուենը Սրտակի հետ ամուսնացնելու խընդիրն եւ սակայն Տանուտէր Սիրուն մերժած էր նորա առաջարկութիւնն առարկելով թէ՛ իմ աղջիկն այն աղջիկներէն չէ որ ես աժան կերպով տամ. միտքս դրած եմ քսան հատ կլոր լիրա նախա անուել անոր տարողէն՝ Պ. Մկրտն տեսնելով Տանուտէր Սիրունի այն մտադրութիւնն եւ միւս կողմէ թուեաւորուելով Նարդիկ խաթունի քսու զրպարտութիւններէն ձեռնթափ եղած էր: Աւ թէեւ Վարդ խաթունի ուղածը Սրտակն էր ու շատ կը փափագէր ու այդ երկու սոխակներն որ մը միացած տեսնէր, բայց ի՞նչ կրնար ընել նա, քանի որ այս խնդրոյ մէջ երբէք ձայն չ'ունէր, ինչպէս որ ձայն չ'ունին Հայաստանի, մանաւանդ հարաւային մասի հայ մայրերն իրենց գոտեքց ամուսնութեան խնդրոյ մէջ: Հօր կամքն իւր դասեր կեանքն է: Հօր մը չըրամանը կամ խօսք առ այս բարոյփն անգառնալի վճիռ մ'է, եւ աղջիկը վաճառուի իր մը: որմէ որ աւելի շահ կ'ակնկալէ հայր մը անոր կը վաճառուի աղջիկը: Փոյթ չէ թէ երկու ամուսնացեալը հաճութիւն ունենան կամ ոչ, բաւական է որ աղջկան մը հայր քանի մը հարիւր զրուշ աւելի շորթելու կամ իւր փառասիրութիւնն յաղ եցնելու

առիթ ունենայ . . . թէ՛ արքան տխուր հե-
տեւութիւններ եւ ցաւալի իրողութիւնը
յառաջ կը բերէ . այս խտտելի սովորոյթը ,
զայնս թուել առ այժմ անդէպ համարելով ,
միայն փութանք յարել թէ՛ Սոսունի հայրն
ալ երկրի այդ ընդհանուր սովորութեան
ազդեցութեան ներքեւ իւր արծաթսիրու-
թեամբ կը զիջանի հաւանութիւն տալ Մըխ-
սի Մրդարին , առանց գիտութեան Վարդ-
խաթունին եւ Սոսունի :

Երբ Մըխսի Մրդարը Տանուտէր Սիրունի
հաւանութիւն տալը կը տեսնէ , խորաման-
կութեամբ իսկոյն կը հրամայէ հաց կի-
սել¹⁵ ու զանազան բարեմարտութիւններ-
ով « Աստուած խաց ու դովաթ տայ » ը-
սել : Եւ ապա , մատանի մը եւ քանի մը
հատ արծաթ դրամ՝ իբր նշան Տանուտէր
Սիրունի առջեւ կը դնէ , որն որ վերցնելով
մշակ Հասոյի ձեռամբ Վարդ խաթունին կը
դրկէ :

Քանի որ Տանուտէր Սիրունի եւ իր նոր
խնամի Մըխսին ու իր ընկերները՝ սեզան
նստած Սոսունի առեւտրով կ'զբաղէին և
մերթ Խիզանի ձեռակ նեկտարահամ գինին
պարսկերով անուշ անուշ , մէկմէկու կ'ը-
սէին , անդին , տան մէկ խորջ բացուող մա-
ռանի մէջ՝ Վարդ խաթուն եւ իր սիրելի
Սոսուն նստած կուլային ու կը նշարէին այն
չար սովորութիւնն որ կը կապուէ իրաւուն-
քն եւ արդարութիւնն : Ահա՛ այդ յուզեալ
պարագային , Հասուն կը մտնէ ներս ու
թաշկինակի մը մէջ ծրարուած Մըխսու-
նշանը Վարդ խաթունին երկնցներով « Առ-
էտ¹⁶ քո աղջկէ նշանն է » : Վարդ խաթուն
սրտի ցաւէն այլալուծ կը յորդի արտօրն
իր աչաց ու կը սլափախանէ Հասունի ձայ-
նով նուազած , « Տար կորսնցուր իմ աչքե-
րէն այդ Յուզի¹⁷ արծաթը . ես գիտեմ որ
Սիրուն իր խեղճ աղջկիւ պիտի ծախէ . Աս-
տուած այնպէս խոր¹⁸ տունն աւերէ : »

Հասուն իր հանելի դէմքը խոփուելով ա-
նոնց վրայ , անհետեւ ձայնով կը պօռայ
« Խաթունիս , Հասոյի ձեռք ի՞նչ չարայ¹⁹ »
և նոյն ծրարն հոն ձգելով դուրս կ'ելլայ :

Գիշերն արդէն երեք ժամէն աւելի ան-
ցած էր , ամեն ոք իր յարկին ներքեւ հան-
դարտ կը ննջէր : Երբ Տանուտէր Սիրունի
առեւը մէկ կողմէն Սոսունի առեւտուր կը
ինէր միւս կողմէն Վարդ խաթունի եւ իր
զստեր լաց տեղի կ'ունենար , եւ այդ տը-
խուր գիշերը կարծես թէ դժոխային ծան-
րութեամբ երկաթի ունէր թեւեր : Սոսու-
նըն եւ իր խեղճուկ մայր քուն չ'եղան եր-
բէք , Տանուտէր Սիրունի իր հիւրերով հիւ-
րանոց քառուկան ննջելու , իսկ մեր զըթ-
բախտ մայր եւ աղջիկ նստած առանձին ի-
րարու մօտիկ , կ'ողբային այդ սեւ օրն ու
կը մրմնջէին անէծքներ սաստիկ :

Առաւօտեան զուարթ հովիւ հազիւ թէ
սկսած էր մեղմիկ սուլել եւ կեանք սփռել
ընթացեան , Վարդ խաթուն եւ իր Սոսուն
ողջոյն գիշերն անքուն դուրս կ'ելնէն հան-
դէպ բարի լուսուն կ'աղօթէն ու կը զեզուն
իզձերն իրենց անմեղ հոգեւոյն : Տանուտէր
Սիրունը նախաձայնները կը հայթայթէ որ
արեւը ծագելուն պէս իւր հիւրերը ձամ-
բու դնէ :

Սոսուն եւ իր մայր միշտ զգածեալ միշտ
յուզուած , կը բացազանչեն « Այ՛ Սոսունած » :

Տանուտէր Սիրունի հիւրերը մեկնելէ
եաք , Սիսակի քոյր Գեղեցիկ կը հասկնայ
երեկոյեան տեղի ունեցած ամեն բան . տը-
խուր տպաւորութեան մը ներքեւ կ'երթայ
պատմել իր եղբոր այդ դէպքեր , որոնք

բացած են իւր սրտին խիստ խոր վէրքերն :
Իսկ Սիսակ երբ կը լսէ այդ լուր , կար-
ծես թէ իր սրտին կը մխի մի սուր ու կ'ըս-
կըսի մրկել զինք անմեղ սիրոյ հին հուր :

Ղ . Պ . ՆԱՀԱՊԵՏԵԱՆ
(Շարունակելի)

1 խնամի . 2 անտարբեր լուել . 3 դարձեալ .
4 հիւր . 5 մեծ հարստութիւն տայ . 6 բայց .
7 մտածես . 8 խմբով . 9 անոնց . 10 գիտեմ .
11 բարին ըլլայ . 12 հետն է . 13 քաղաքավա-
րական մի ձեւ է գիւղացիների այս կերպ
խօսակցութեանց մէջ գործածելի : 14 փե-
սայացուի ծնողաց կողմէ արուելիք դրամ ,
զոր տեղ տեղ ալ զաւան կը կոչեն : 15 Սովո-
րութիւն կայ հայ գեղջուկներին երբ ի-
րենց մէջ նշանուտութիւն լինի , երկու
կողմի (աղջկան եւ տղայի) քուտրների ձե-
ւամբ հաց մը չորս կտոր կ'ընեն որ կէս նը-
շան օրհնեալ կը համարին : 16 այդ . 17 Յու-
զայի . 18 հոր . 19 ձոր :

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Ա Ր Ո Յ

Դեկտեմբեր 12-էն 18

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ձրոյց կայ թէ Գերմանիոյ եւ Աւստրիոյ
սահմանաց վրայ գտնուող Կուրքօ , Տրէն-
դէն , Ռօօք , Կանէձքի եւ Ռապէձքի զօ-
րավորք եւ ուրիշ հրամանատարներ ին-
գերսպուրկ կանչուեր են՝ Ձարին նախա-
գահութեամբ զինուորական արտասովոր
խորհուրդ մը կազմելու համար :

Գերման լրագիրք կը ծանուցանեն թէ
Ռոտտիոյ Ահհերուն մէջ մեծ յուզում կը տի-
րէ , Ռոտտիոյ Թագաւորութեան վերահաս-
տատման հաւանականութեան շնորհիւ , եւ
մինչեւ իսկ Ռուսիոյ դէմ լեհական նոր ա-
յլըստամբութեան մը պատրաստութիւնը կը
կատարուին եղեր :

Օտեսայի եւ չրճակայից զօրքերէն 15
հազար հոգի Պաքու՛մ եւ Կաւկասիա զըր-
կուեցան այս օրերս :

Կիպրոս կղզոյն մէջ Քրէնկներ տեղի
կ'ունենան , յորս որոշումներ կը քուէար-
կուին , որք պատուիրակութեան մը միջո-
ցաւ պիտի հաղորդուին անգլ . կառավա-
րութեան ի Լոնտոն , Կիպրոսցիք կը խնդրեն
որ տուրքերը զեղջուին , եւ կղզոյն Օրէ-
նըսդի խորհրդոյն լիախատար իշխանու-
թիւնը տրուին տրոց մասին փոխխաթուն-
ներ ընելու : Ի մի բան , տեսակ մը ելը-
տական ինքնօրինութիւն կը խնդրեն Կիպ-
րոսցիք :

Թայ՛ց հետեւեալ ուշագրու գիտողու-
թիւնը կ'ընէ իւր դեկտեմբ . 21 խմբագր-
րականաւ . « Նետաքրքրաշարժ է բազմաթիւ
1887 տարւոյ վերջի տագնապն այն տագ-
նապին հետ որով փակեցաւ 1886 տարին :
Ֆրանսա հիմա գրեթէ բոլորովին դադարած
է մտահոգութեան պատճառ լինելէ : Պիզ-
մարք Իշխան 1886ի վերջն իւր աչքերը
դարձուցած էր Ֆրանսայի վրայ : Այժմ
նոյն ուշագրութեամբ կը դիտէ զՌուս ,
Վասնզը միեւնոյն կրնայ լինել , զի ապա-
գայ պատերազմի մը մէջ Ֆրանսա եւ Ռու-

սիա պիտի դաշնակցին Գերմանիոյ եւ Ա-
ւստրիոյ դէմ : 1886ի վերջը վտանգն Ա-
րեւմտից կողմն էր : Բայց առ այժմ վտան-
գըն Արեւելից կողմն է : Ֆրանսա միջագ-
գային տեսակէտով բոլորովին հանդարտ է
հիմա : »

Գեկտ . 19ին Վիէնայի մէջ լուր տա-
րածեցաւ թէ Ձարին կենաց դէմ փորձ մը
եղեր է եւ Ն . Կ . Վեհափառութիւն վի-
րաւորուեր է . նաև ապստամբանական շար-
ժում մը ծագեր է Բեդերսպուրկի մէջ : Ա .
ւելորդ է ըսել թէ անհիմն էր այս զրոյց :
Բայց Ռուսիոյ այժմեան ներքին վիճակին
մէջ այս տեսակ անհիմն զրոյցներու հրա-
տարակումն եւ պահ մը հաւատացողներ
գտնելն իսկ տեսակ մը չահեկանութենէ
զուրկ չէ :

Սոփիայէ գեկտ 22 թուով կառավա-
րական աղբիւրէ բաշուած հեռագիր մը կը
յոյտարարէ թէ « Ֆերտինանտ Իշխանի մօ-
տալուտ հրաժարման նկատմամբ տարած-
ուած զրոյցներ բխած են անոնցմէ որք ար-
դէն ծանուցեր էին Սոփիայի հրկիզումն և
Պուլկարիոյ մայրաքաղաքին մէջ ապստամ-
բութեան մը ծագումը : Ֆերտինանտ Իշ-
խան գահէն չպիտի հրաժարի , եթէ պուլ-
կար ազգն այդպիսի փափաք մը չ'արտա-
յայտէ կանոնաւորապէս : »

Հակառակ այս կառավարական հերքման ,
Ֆերտինանտ Իշխանի տապալման հաւանա-
կանութիւնն օրուան խնդիր է յԱւստրա :

Լոնտոնի լրագրաց հրատարակած հե-
ռագիրք կը ծանուցանեն թէ մեծ գործու-
նէութիւն կը տիրէ Աւստրիոյ եւ Ռուսիոյ
բոլոր զինուորական շրջանակաց մէջ : Բայց
անգլ . զլրաւոր լրագիրք կ'իմանան թէ
բարեկամական լուծման մը փափաք կը տի-
րէ տակաւին :

Պիզմարք Իշխան ունի երէց եղբայր
մը , որ դեռ կառավարիչ է ի Նաւիարտ :
Այս եղբայր հոնգարեան թոշակի իրաւունք
ստանալով գործէ պիտի քաշուի յունուար
1ին եւ նմա պիտի յաջորդէ Երկաթեայ
Նախարարագետին մէկ ուրիշ ազգականը ,
Պ . Էրնէսդ Պիզմարք , որ պաշտօնեայ է այ-
ժմ ի Եգէպոլին :

Սուտանի ապստամբ դեկ . 14ին յարձա-
կեցան Սուաքինի վրայ , բայց ետ մղուեցան :
Անգլիացիք երկար ժամանակ պահպանելէ
յետոյ Կարմիր Մովու այս կարևոր նաւահան-
գիստ , չը կրցան վերջ մը տալ Սուտանցւոյ
պարբերական յարձակումներուն , և Սուաքի-
նի պաշտպանութիւնն Եգիպտացւոյ յանձ-
նելով իրենք ետ քաշուեցան անտի Խոտիլին
Կառավարութիւնը , Սուտանցւոյ նոր շարժ-
ման վրայ որոշեց վաշտ մը օգնութիւն զըր-
կել ի Սուաքին :

Ն Ե Ր Ք Ի Ն

Պետական Խորհրդոյ Օրէնսդիր ճիւզին
նախագահ Մահմուտ Ճէլալէտտին փաշա
Երմտական նախարար անուանեցաւ փոխա-
նակ Չիւհտի փաշայի :

Թուրք թերթերը կ'իմանան թէ Պետա-
կան Խորհրդոյ Օրէնսդիր ճիւզին նախագահ
պիտի անուանուի նոյն ճիւզի անդամներէն
Բարձր . Եէյս-իւ-Իսլամ էֆէնտի զորի
Խալիտ պէյ , որ ժամանակէ մ'ի վեր փո-
խանորդարար կը վարէր զայդ պաշտօն :

Երմտացոյցի յանձնաժողովն որոշեր է

որ Միլիթի վարժարանի այն շրջանաւարտը որոց տարիքն օրինական սահմանին հասած է, փոխանակ ըստ առաջին որոշման վեց հարիւր զրուշ ամսաթոշակաւ կառավարական պաշտօնատանց մէջ ծառայելու, նախապէս փամանակ մը անթոշակ ծառայեն եւ յետոյ ի հարկին պաշտօնի կոչուին ամսաթոշակաւ :

—Նախորդ Խաբիլ Իսմայիլ փաշա ընտանեօք մայրաքաղաքս հասաւ չորեքշաբթի առաւօտ Խաղալիան Ֆլորիօ Րիւպաղինօ ընկերութեան Ռէճիս Մարկեթի շոգենաւով որ յատկապէս փարձուած էր Ն. Բարձրութիւնը Նարոյիէն Կ. Պոլիս բերելու համար : Երբ շոգենաւը նաւահանգիստ մտաւ, Վեհ. Սուլթանի առաջին թիկնապահ Մէհմէտ փաշա եւ Իսմայիլ փաշայի օրդի Հասան փաշա (արդի Խաբիլի եղբայրն, որ արդէն մայրաքաղաքս կը գտնուի) յատուկ շոգենակողով Ռէճիս շոգենաւը գնացին յանուն Ն. Վեհափառութեան բարի գալուստ մաղթելու Բարձր հիւրին : Եոզենաւը կանգ առաւ Տօրմա Պահչէի առջեւ, ուր Իսմայիլ փաշա ցամաք ելնելով իւր հետեւորդաց հետ ուղղակի Ելլալըզի պալատը գնաց արքունական կառքերով իւր մեծարանքը եւ շնորհակալութիւնը մատուցանելու յոտս կայսերական դահլիջի եւ պատիւ ունեցու Վեհ. Սուլթանին ներկայանալու ու արժանացաւ Ն. Վեհափառութեան սիրալիր մեծարանաց, Իսմայիլ փաշա կրկին շնորհակալութիւն յայտնեց Օգոստոսիա Վեհապետին այս շնորհաց համար :

Ն. Բարձրութիւն իւր հետեւորդաց հետ Ելլալըզին մեկնելով պալատական կառքերով եւ ցամաքի ճանրով Էմիրկէնի իւր ծովեզերեայ ապարանքը գնաց :

—Գաւառներէն կը գրեն թէ տեղական իշխանութիւնը Բէճեթի-ի տուրք կը պահանջեն ծխախոտի Ռէճիի օտարոհպատակ պաշտօնեայներէն որք կը մերժեն եղեր վըճարել զայնս : Ռէճիի կեդրոնական վարչութիւնն իրողութիւնը իմանալով պէտք եղած ձեռնարկներն ըրեր է Բ. Գրան մօտ :

—Առեւտ. նախարարութեան ուղղեալ տեղեկագրով մը, որ յանձնուած է Կ. Պոլսոյ Առեւտրական Սենեկին, Գամասկոսի Առեւտր. Սենեակն արտօնութիւն կը խնդրէ կայս. կառավարութեան պարտաւորել Սուրիոյ օճառի գործարաններն որ նախկին եղանակաւ պարտաստեն իրենց օճառը, զոր ձէթի միջոցաւ : Գամասկոսի Սենեակն իւր առաջարկութիւնը կը հիմնէ սա պարագային վրայ, թէ ժամանակէ մ'ի վեր յիշեալ գործարանաց կողմէ ընդունուած գրութեան պատճառաւ որուն համեմատ օճառն ամենայնով տեսակէ ձէթով կը պատրաստուի : Գամասկոսի օճառը որք երբեմն այնքան լաւ համբաւ ունէին, բոլորովին երեսէ ինկած են այժմ :

—Կապի Էմբոսի մէջ կը կարգ տնջ. «Կիւսանանք թէ Անտօն էֆէնտի Ազարեան հետամուտ է Սելանիկի թրանզիթներու շինութեան արտօնութիւնը ձեռք բերել, զոր երբեմն կը խնդրէր Պետրոս էֆէնտի Նաֆիլէյեան : Այս վերջինը մինչեւ իսկ գործն յաջողեցնելու վրայ էր, երբ Թօփհանէի հանրօգուտ շինութեանց յանձնաժողովն խորհրդով վերջին վայրկեանն որոշուեցաւ որ թրանզիթը Սելանիկի թաղապետութեան ձեռքով շինուին : Կերեւի թէ այս որոշում ետ առնուած է ի վերջոյ :

—Թարիք թօսելով ի մասին խճուղեաց շինութեան, կայս. կառավարութեան ուղղութիւնը կը հրապարակէ Կարնոյ և Տրա-

պիզոնի ճանապարհաց վրայ, որովհետեւ, կ'ըսէ, Ռուսիա Պաթուրի երկաթուղին շինելէն ետքը ջանացած է Պարսկաստան երթալիք տարանքները ուստական հողէն անցունել և այսու դադարման դատապարտել Կարնոյ եւ Տրապիզոնի ճամբայները : Սակայն, կը յարէ թուրք թերթը, Պարսիկ վաճառականը նախամեծար կը համարին Կարնոյ ճամբան, որովհետեւ ուստական երկաթուղին բարձր գիններ կը պահանջէ եւ դժուարութիւններ կը յարուցանէ, բայց եւ այնպէս կ'ստիպուին ակամայ նոյն երկաթուղոյ դիմել, չը գտնելով Տրապիզոնի եւ Կարնոյ ճանապարհաց վրայ փոխադրութեան համար հարկ եղած դիւրութիւնները :

—Հոռմի օսմ. դեսպանատան երկրորդ քարտուղար Խալիս պէյ միւսնոյն պաշտօնով Բարիդի դեսպանատունը փոխադրուած է :

—Վեհ. Սուլթանն Իմթիյազի ականակուս պատուանշան շնորհեց Կորկիտո թագաւորին եւ յատուկ թիկնապահաց միջոցաւ Աթէնքը զրկեց զայն : Պատուանշանի յանձնուել տեղի ունեցեր է շարժուած մէջ մեծաւ հանդիսիւ Վեհ. Սուլթանի այս համակրանաց արտայայտութիւնն յոյժ լաւ տպաւորութիւն յառաջ բերեր է ի Յունաստան :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հայրեն, ընկերակցութեամբ Պատրիարքարանի գործակատար Ֆրէնկեան Մեծ. Կրթահամ էֆէնտի նախընթաց օր Ելլալիան նախարար Վսեմ. Մահմետ փաշայի ապարանքն երթալով շնորհաւորեց Ն. Վսեմութեան նոր պաշտօնը :

Կրօնական Ժողովն իւր վերջին նոտին մէջ ազգային կարեւոր խնդրաց վրայ խորհրդակցութիւն մ'ունեցաւ Ազգային Ժողովոյ Մայր Դիւանին հետ :

Խառն ժողովոյ կողմէ Տիգրանտիկերտի համար նախապէս տրուած առաջնորդական ընտրելեաց ցանկին վրայ Ժողովն աւելցուց նաեւ Խախրանեան Արժ. Ներսէս վարդապետի անունը :

Կրօնական Ժողովն նկատողութեան առնելով դաւաճաց վիճակն եւ ներկայ պարագայից մէջ աւելի պէտք տեսնելով հովուական այցելուաց, յետ խորհրդակցութեան դաւաճաց վիճակները վեց շրջանակի բաժնեց եւ վաւերացուց հովուական այցելուաց մասին իւր գիւնանին կողմէ պատրաստուած հրահանգն, իսկ հովուական այցելուաց նիւթական ազրիւր մը հայթայթելու մասին որոշեց խորհրդակցել իւր յաջորդ նստին մէջ :

Ժողովը նկատելով որ Աստուածաշունչի տպագրութիւնն սպառած եւ գտնուածներն ալ սուղ լինելով ժողովուրդը չը կրնար ի ձեռնն ունենալ Ս. Գիրքը, զայն ընդհանրացնելու եւ դիւրամատչելի ընելու համար սրօշեց խնդրել ամենայն Հայոց Վեհ. Հայրապետէն սրպէս զի Էջմիածնայ մէջ գտնուած ամենահնագոյն եւ ընտիր ձեռագիրներէն Ս. Գիրքը տպագրել ապ հարկ եղած թուով եւ կարելի եղածին շարժի դիւրագին վաճառուի ի պէտս ազգայնոյ :

—Կիւսանանք թէ Պատրիարքական խնդրոյն վերաբերեալ պաշտօնապիք շարժուս յանձնուեր են Պետական Խորհրդոյ Օրէնդիր ճիւղին :

—Հինգշաբթի օրը Ազգ. Պատրիարքարանի մէջ տեղի ունեցաւ փաստարան Մեծ. Յակոբեան Յակոբ էֆէնտիի նշանախօսու-

թիւնն ընդ Ազն. Օր. Բերուզ Պ. Պատմաճեանի, ի ներկայութեան երկուց կողմանց ազգականաց և բարեկամաց :

—Պետերբուրգում հրատարակուող ամենատարածուած Սէքս ուսու օրագիրը հայոց ընդհանուր թիւն հետեւեալ կերպիւ է ցոյց տալիս :

Ասիական եւ Եւրոպական աէրութիւններին մէջ ցրուած հայերի ընդհանուր թիւը հասնում է մինչեւ 4,016,303 հոգու, որոնցից ստուար մեծամասնութիւնը կազմում են պարզ երկրագործները, որոնք արդէն բաւական երկար դարերէ ի վեր ապրում են Հայաստանում, որը այժմ գտնվում է Տաճկաստանի, Ռուսաստանի եւ Պարսկաստանի տիրապետութեան տակ :

Հայ Ժողովրդի մը մեծամասնութիւնը թուով 2,325,323 մարդ, ապրում է օսմ. կայսրութեան սահմաններում : Տաճկաստանի հայերից յետոյ մեծամասնութիւն կազմում են Ռուսաստանում ապրող հայերը : Նոցա թիւը հասնում է մինչեւ 1,391,620 հոգու : այնուհետեւ երրորդ տեղը բռնում են Պարսկաստանում ապրող հայերը, որոնց թիւը հասնում է 34,695 հոգու : Ա. ըստըրիայում ապրող հայերի թիւը 25,463 է : Իսկ Բուլղարիայում (9,250) Ռուսիայում (15,200), Հնդկաստանում, Սիրիայում, Աֆղանիստանում, Հարէչուստանում, Ֆրանսիայում, Իտալիայում Անդլիայում եւ վերջապէս Ամերիկայում ցրուած բոլոր հայերի թիւը հաշվում է մինչեւ 30,000 : (Որոշա)

Հրատարակուեցաւ
Ը Ն Դ Ա Ր Չ Ա Կ
ՕՐԱՑՈՅՑ
1888

ՍԵՓ ՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՉԳ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՍԻԱՆ

Կը պարունակէ բաց ի տոմարական գետելիքներէ ժամանակագրութիւնը. —Աղիւսակ գրամոց գըլխաւոր ազգաց. —Ամսանունը. —Անունը Օսմ. կայսերաց. —Աւագանի կայս. Պալատան. —Նախապք Բ. Գրան. —Մեծ պաշտօնատար մայրաքաղաքիս. —Հրամանատարը բանակաց. —Պետական խորհուրդ. —Արդարութեան և կրօն. գործոց նախարարութիւն. —Մաքսատունը. —Կուսակալը նահանգաց. —Պատրիարքունք եւ Ազգայնաւոր. —Օսմանեան դեսպանը. —Գեսպանը եւ հիւպատոսը օտար տէրութեանց ի կուսանդուակոյիս. —Վիճակագրութիւն օսմանեան կառավարութեան. —Հայ ազգի պաշտօնատարք եւ աստիճանաւորք. —Հայրապետութիւն հայոց. —Կախկողմութիւն. —Ազգ. կեդրոնական վարչութիւն. —Յանձնաժողով. —Պաշտօնեայ պատրիարքարանի. —Առաջնորդութիւնը թուրքիոյ և թիւք. —Հովուութիւնը. —Մայրավանք թուրքիոյ. —Թաղարայք Կ. Պոլսոյ. —Համադումար թաղարայքի. —Բարեգո. ծ. եւ կրթ. հաստատութիւնը. —Առաջնորդութիւնը ի Ռուսաստան եւ այլն. —Կայսերական գերդատարն Ռուսիոյ. —Հայազգի աստիճանաւորք եւ պաշտօնատարք Ռուսական տէրութեան. —Նոյն, Պարսկական տէրութեան. —Նոյն, այլ եւ այլ տէրութեանց. —Հոռմիական հայ հասարակութիւն. —Բողոքական հայ հասարակութիւն. —Յուդայի կրթական պաշտօնեայ. —Գասաստուք պետական ուսումնարանաց. —Իսթիլ քաղաքային եւ զինուորական. —Փաստարանք. —Արուեստագէտք. —Լրագիրք. —Հեռագրութիւնը թուրքիոյ և միջազգային. —Միջազգային թղթատարութիւն. —Եւրոպական նամակատուք. —Յամաքսային թղթ. ասիական թուրքիոյ. —Ճամանակացոյց Օսմ. Միջ. թղթ. —Ազգ. —Մանուցմունք :

Գինն է 3 դահեկան
Կեդրոնատեղին է Գ. Պաղտատլեան գըրատուն, Յակոբեան խան թիւ 43.
1888

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏԵՒԵԱՆ, ՀՈՏԱՒԷՏ ՆԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արգուզարդի համար Ambrosial cream, օճառու գուլճ ամիլ-ւոյ մարդու համար. Crème de Fraises մորթի կակուզցնելու համար. Poudre de Cypris դոփացնելու եւ ձերկցնելու համար մորթի. Stilboideֆայլ տալու համար մազերուն եւ մարու-քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia ակապնելու համար. Eau de Chypre արգուզարդի համար: Թաշխինակի հա-մար հոտաւէտ նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma-rie Christine. Imperial Russe.

977 20—29



ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅՅԻ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍՏԱՆԲՆՈՒԵԱՆ ԸՆԿ.

Ընդարձակ առեւտուր զաւստաց հետ
 Չինէ եւ ձափայէ ուղղակի բեռցած
 Գերբնաիր եւ տնեճ հաշակի յարմար քէշեր
 ԳՆԵՐ ՉՂՔՈՒՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ

Փորձը ամեն գովեստէ լաւագոյն պիտի հաստատէ հինգ տարիէ ի վեր սոյն վաճառատան ըրած զօհող թիւերն յաճախորդները գոհացնելու համար:

Պահճէ Գարու ձէլալ պէյ խանի
 դրան կից թիւ 10
 1000 64—78

ՓԱՌԱԿԱԶՄ ՕՐԱՅՈՅՅՔ

Կուզէք անենայ Նոր Տարւոյն համա-նում եւ ընդարձակ Օրացոյցն, պարզ կամ սակէզօճ, թաւշայ կամ մետաքսեայ, նախ-շուն, ընթուշ ու փառաւոր:

Կազանդի համար կաշեկազմ, սակէզօճ եւ զարդարուն աղօթագիրքեր: Պատիժ-Օրացոյցներ մեծազիր կամ մանրիկ:

Իրմեցէք Չարմարճըրըր-Եօգուշ, թիւ 51
 Վ. Արսլանեան եւ Եղբարց գրատունը:

Գաւառական յանձնարարութիւնը խը-նամով կը կատարուին: 1354 5—7

ՉԲՕՍԱՆՔ ԿԱՄ

ՀԱՒԱՔԱԾՈՅ
 ԳԱՂՂԵՐԷՆ ՀԱՏԸՆՏԻՐ ԱՌԱԿԱՅ

Հանդերձ բառական Թարգմանութեամբ
 եւ նիս բացատրութեամբ
 Աշխարհաբանաց Տ. Մ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆ

Սոյն գործն տետր առ տետր կը հրա-տարակուի 15 օրն մի անգամ, և մէն մի տետրն 52 երեսներէ բաղկացեալ է, խիստ մաքուր թղթի վրայ տպուած և գիւրատար դիրքով:

Կեդրոնատեղին է Պօզաճեան գրատուն
 Չարմարճըրըր Եօգուշ թիւ 36:
 Մէն մի տետրի գինն է 50 փարա.
 1359 1—3

ԱՋԴ

Խափանեալ Մասն- զաւելչաթերթի արտօնատէր Գէորգ Էֆէնտի Ս. յվազ-եան՝ Միտիլիէն ընտիր ձեթախւղ և օճառ, Թէնտոսէն սլատուական դիւնի և Իզմիրէն ընտիր օղի բերել տուած է, և աժան գնով կը վաճառէ Ղալաթիա Բէնչչէնպիւհ-բազար, Իփսի խան:

Մինչեւ ցարդ Ս. յվազեան Էֆէնտիի Բիշեալ վաճառատունը դիմողք յոյժ

գոհ եղած են ապրանաց ընտիր տե-սակէն և գնոց չափաւորութենէն.

Այս օրերս լաւագոյն ապրանքներ հասած են. 1318 11—15

Վան Երտօնատեան
 Տնօրէն-Պատասխանատու
 Մ. ՏԱՄԱՆԵԱՆ

ՏՊԱԳ. ԱՐԵՆԵԼԻՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ

ՄԼՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ



ԱՆԻՐԸՆՆՈՒՆԵՐԻ ՄԼՐ. ՆՈՐՈԳՈՂԸ
 (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը: Գլխու թեփը շուտ մը աներևութ կ'ընէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի:

“Մէկ շէջ կը բաւէ:” Այդ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքաւունած մազերը իրենց բնական գոյ-նին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան:

Կերկ չէ, և ամենեին գեան մը չընէր: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացը մէջ պահել, առանց ուշանալու շէջ մը ստացիր ԳԼՔԻՆՍ՝ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ համա-խաղանկուն հաշ նորոգուէն. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
 Կոնյակէ Բարիզ ու Նիու Եօրք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա-գործներու և անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւզ եղբարց բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընա Բարուան. Անգլիական մթերանոց, Նիւքսէք Գալտըրըմ. և Իզի-տոր Լազանտէլլա 433, Բերա Մեծ փողոց:

ՀԵՐՄԱՆԵԿԸՆ ԾԵՂԱՎԵՓՈՒՆԸ



ԳԵՂԱՅԿԱՅՈՒՆՈՂ ՄԼՐՍ՝ՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ
 ԾԵՂԱՎԵՓՈՒԹ, ՄԻՇՏ ԹԵՐՍ:

Անգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշի-ներէ: Առաջին անգամ գործածելովն ալ, որ բանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վիզը, թեքը և ձեռքերը պիտի առ-նուն անոյշ փափկութիւն մը և մարմարինի փայլ հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ: Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցունէ: Անհետ կ'ընէ մորթի սևուքը, երեսի և ձեռքի ցանքերը, արևայ-րուքը, և ուրիշ ամեն բրտուութիւն և բժաւորութիւն: Եւ աս ամեն բանով անկարելի կ'ընէ մատուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոնյակէս Բարիզ ու Նիու Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւզ եղբարց բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընա Բարուան. Անգլիական մթերանոց, Նիւքսէք Գալտըրըմ. և Իզի-տոր Լազանտէլլա 433, Բերա մեծ փողոց:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԼՁԵՐՈՒ:

ՄԷԼԻՐՈՂ
 ՄԼՁԵՐՈՒ ՄԼԿ ՀԵՏԻԿ ՆՈՐՈԳԻՉ

Իրապէս իրենց առջե թարմ գոյնին կը դարձունէ ձերմըկած կամ գունաթափ մազերը. Կը դարբեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շէջերու մէջ:

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa λpton Row). Կոնյակէս Բարիզ ու Նիու Եօրք:

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւզ եղբարց բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընա Բարուան, Անգլիական մթերանոց, Նիւքսէք Գալտըրըմ. և Ի-զիտոր Լազանտէլլա 433, Բերա Մեծ փողոց: